



14. ՄԱՐԴ ԶԸ ԿՈՒՆԱ ՈՒՐ ԺԱԿՏԻԳՐԻՑ ՓԱԽՆԻ

Կըսին թե՛ Լաթարա Պոռշ թագավոր օր մե ուր քոշկից գիջնա նազուկա ծովափ, քչիկ մե ուրին զվոնե, կը տեսնա՝ վըր ավզուն պզտիկ տղե մե նստուկ՝ զավազ կը խառնե, քթի տակ բանեեր մ՛:

- Կըսե, թագավոր կը հարցու.
- էդ ի՞նչ է կէնիս:
- Մարգոց ճակտիգիր կը համրրիմ:
- Դու ո՞ն իս:
- Ծս ճակտիգրի հրիշտակն իմ:
- Աղեկ, — կըսե թագավոր, — դու բարի կէրեաս, կունա՞ս ըսիս իմ աղջկա ճակտիգիրն ի՞նչ է:
- Քու աղջիկ, թա՛գավոր, պտի տաս քու ծառա արաբին:
- Արաբի՞ն:
- Հմա՛ արաբին: Ծակտիգիրն է՛դ է:
- Կըսե, կաներևութնա:
- Թագավորն նիաթավեր կը դառնա ուր քոշկ ու սարեն, կը կծկի վըր թախտին, զգլուխ կը կախե, կը մոլորի, շը դինա ինչ էնե, կնիկ կը հարցու.
- Հա՛ւվոր, չորի՞ն իս քիթտի կախի:
- Է՛, կնիկ, — կըսե թագավոր, — հալ-հեքաթ՝ հմլա բա՛ն:
- Քու հորն օղորմի, ես լե կըսիմ, թե ի՞նչ է պատահի: Կանչե զէդ արաբ, հրաման տու՝ թըղ էրթա մըտ արև, ընդրնե վերկու յուզե.

արևն ըդրան կը վառե, կը մեռնի. բան է, թե դառնա՞լ՝ զգլուխ թոցու,  
սրծնա էրթա:

Թագավոր կը կանչե զարաբ, կնկա ցուց տված խավըլ կը դնե  
չառեջ, կը ճամպե մըտ արև: Արաբն է՝ գընկնա ճամպա, շատ  
կէրթա, քիչ կէրթա, ինք գինա, կը հասնի սարի մե, կը տեսնա հան-  
դե արևն ուր արևապտոցն է, ուր շեկ ասեղներն հմա՛լ է շողցուցի, օր  
աչք կը քոցու, աչքեր կը փակե, կը խնդրվի, յա՛ ուրին վառե, յա՛  
վերկուն տա՛ տանե:

Արև կը ծիծղա վըր ըգոր, կըսե.

— Ա՛րաբ, ի՛նչ վերկու, ի՛նչ բան, հլա լուս կիտամ՝ հերք չէ,  
վերկու՛ւ լե գուղե թագավոր: Միամի՛տ, քրզի խաբեր ին: Յետ դաւ-  
ձի գնա, քու ճամպին կը տեսնաս աղջիկ մե՛ էն քրզի խորուրդ մե  
կիտա հալբաթ:

Արաբն է՝ կէրթա, շատ կէրթա, քիչ կէրթա, ինք գինա, դիկա  
կը հասնի դաշտ մե, կը տեսնա աղջիկ մե, ուր աչքեր կապուկ, աջ  
ձեռքին կոտոշ մե բռնած:

— Բա՛րև, խորոտկիկ,— կըսե,— գու ո՞ն իս, ի՛նչ կէնիս չոգա:

— Նս բախտի հրիշտակն իմ:

— Բախտի հրիշտակ, ընձի արևն է ճամպե քու մոտ:

— Գինամ չորին է ճամպի: Կէրթաս էս դաշտով, գելնաս սար,  
սարից դիջնաս ցած, քու չառեջ գելնա չաղբուր մե, ուր չառեջ քարե  
գուռ, ընգրա ջրով կը լողկնաս, քու դուն կը փոխվի, մինակ զմեջ-  
քի դոտին չը քանդի՛ս, քանդեցիր՝ քու գուն կը մնա չառեջվան: Դե՛,  
գնա հըտ քու բախտին:

Արաբն է՝ կէրթա, գելնա սար, սարից գիջնա ցած, կը տեսնա  
չաղբուր մե, չառեջն ուր քարե գուռ, մըջ դռին կը լողկնա, հմա՛լ կը  
սիվտըկի, իմալ վըր խոտի դեղին դրած ձուն, կը հագնի, գընկնա  
ճամպա, դիկա հասնի կաթար, մըտ Պոռշ թագավոր: Թագավոր կը  
տեսնա՝ արաբն հմալ է սիվտըկի, աչքերուն շավտընա, կըսե.

— Հարի քու գոտին տկլոզցի:

Արաբ կը տկլոզնա. թագավոր կը տեսնա՝ օր ըդրա գոտկատեդ  
սև է՝ սելի սև դողի նման, ձեն-ձուն չը հանե, մըջ ուրին կը մտածե.  
«Իմալ էն պզտիկ տղա-հրիշտակն էր ըսի՛ կատարվավ, օղո՛րդ օր՝  
մարդ չը կոնա ուր ճակտիգրից փախնի». զաղջիկ կիտա արաբին:

